3 Նեփի 20-26
(ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-18-Ը)

Ինչպե՞ս ենք մենք մասնակցում Տիրոջ «զարմանալի գործին»:

Այլ բաների շարքում Փրկիչը նեփիացիներին սովորեցրեց նաև Իսրայելի հավաքման մասին և պատվիրեց նրանց ուսումնասիրել սուրբ գրությունները և պահել իրենց իսկ արձանագրությունները: Ինչպե՞ս կարող ենք հետևել այդ ուսմունքներին այսօր:

Խորաքննեք մարգարեներին

Փրկիչը պատվիրեց նեփիացիներին՝ «Խորաքննեք մարգարեներին» (3 Նեփի 23.5): Մենք հնարավորություն ունենք լսելու ապրող մարգարեի և Եկեղեցու այլ ղեկավարների խոսքերը գերագույն համաժողովի ժամանակ:

- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելին քաղեք գերագույն համաժողովից:
- Մարգարեներին խորաքննելն ինչպե՞ս է մեզ օգնում հավաքել Իսրայելը:

Միացեք գործին

Հիսուս Քրիստոսը մարգարեացավ վերջին օրերում «զարմանալի գործի» վերաբերյալ (տես 3 Նեփի 21.9): Այդ գործը Իսրայելի հավաքումն է: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը կոչել է այն «ամենակարևոր բանը, որ այսօր տեղի է ունենում երկրի վրա» և ասել. «Եթե դուք ընտրեք, եթե դուք կամենաք, դուք կարող եք լինել դրա մեծ մասը»:[1]

- Ինչպե՞ս կարող եք դուք և ձեր ընտանիքը ավելին սովորել և մասնակցել Իսրայելի հավաքմանը:

Գրեք օրագրերում

Հիսուսը պատվիրեց Իր նեփիացի աշակերտներին գրի առնել Իր ուսմունքները և Սամուել Լամանացու մարգարեությունները (տես 3 Նեփի 23.4, 6-13): Նմանապես, մենք կարող ենք գրի առնել մեր կյանքի փորձառությունները, որոնք կօգնեն մեզ և կուսուցանեն ուրիշներին:

- Դուք ունեցե՞լ եք հոգևոր փորձառություններ, որոնք գրի չեք առել:
- Ինչպե՞ս կարող եք գրի առնել այն ամենը, ինչ Աստված ուսուցանում է ձեզ:

ՀՂՈՒՄ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» (երիտասարդների համաշխարհային հոգևոր երեկո, հունիսի 3, 2018), *HopeOfIsrael.ChurchofJesusChrist.org*:

ՊԱՏԿԵՐԱԿԱՆ՝ GETTY IMAGES-Ի